№ 213 Նոյեմբերի 29 (Դեկտեմբերի 11) 1880 Նոյեմբերի 29 (Դեկտեմբերի 11) № 213

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբ. կէս տարվանց 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրողներին ցրվում են ուղարկի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ձեռագրերը չեն տրվում է ամեն ինչով:

Յայտարարութիւնների համար պէտք են
վճարանքը բաին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ԻՆ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից).

ՊՐՈԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգաւորութիւններ, II Ազատնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Ապտաքին տեսութիւն, V խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիեթոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ.

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ. տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամս. 5 բ., չորս ամս. 4 բ., երեք ամս. 3. բ. երկու ամս. 2 բ. և մի ամս. 1 բուբլ.

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կարծիքը:—Ներքին տեսութիւն. Նամակ Շուշւոյ. Նամակ Բաքուից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն. Արեւելեան գործեր. Ֆրանսիա.—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ.

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

—

„Մշակի" 210 համարի ներքին տեսութեան մէջ տպված „Տան և եօթ հաղար բուբլ" վերնագրով յօդուածը, քանի մի անձինք, ինչպէս լսեցինք, ընդունել են որպէս մի յօդուած, որ թշնամական զգացմունքից է թելադրված դէպի Էջմիածինը: Ուհասարակ ժամանակ է փարատել մի սխալ գաղափար. կարծում են, որ քննադատելով Էջմիածինը, մենք նրան թշնամաբար ենք վերաբերվում: Դա ամենայնա ապացոյց է որքան, մենք հայերս, դեռ սովոր չենք տպագրական փոքր ի շատէ ազատ խօսք լսելու:

Հայերի և առհասարակ ասիական հասարակութեան կարծիքով քննադատել մի հիմնարկութիւն նշանակում է թշնամութիւն անել այդ հիմնարկութեան դէմ, նշանակում է նրան փնաել, ցանկանալ նրա կործանումն: Բայց ի՞նչն չընդունել, որ քննադատելով մի հիմնարկութիւն, ընդհակառակն, մարդը ցանկանում է որ այդ հիմնարկութիւնը իր սխալներից ուղղվի, լաւանայ, բարեոքվի, ուրեմն աւելի հաստատ և տևողական գոյութիւն, աւելի յարգանք, աւելի հեղինակութիւն ունենայ: Մենք վախենում ենք տպագրական խօսքի ազատութենից որպէս մի փնասակար, քանդող գործի բերից և մոռանում ենք, որ այն մարդը, որ քննադատում է, նա բարի է ցանկանում, աւելի քան այն մարդիկ, որոնք ամեն բան գովում, ամեն բանին շողոքորթում, ուրեմն միմիայն եղած սխալներին են ձայնակցում, ու անշարժութեան նպաստում:

Եթէ հայոց լուսաւորական եկեղեցին ժողովրդական սկզբունքի վրա է կայանում, եթէ մենք ենք կազմում եկեղեցին, եթէ ազգը ընտրում է իր բոլոր հոգևոր հովիւներին, սկսած կաթողիկոսից մինչև ծխական քահանան, եթէ ուրեմն ազգը, կամ նրա մեծաւոր առաջնորդները իրաւունք ունեն քննադատել իրանց հոգևոր իշխանութեան գործունեութիւնը, այն ժամանակ Էջմիածինը, այդ դարևոր ազգային հիմնարկութիւնը, պէտք է իրան բարեկամ և ոչ թէ թշնամի համարի ազգի միջից յայտնվող քննադատող անձնաւորութիւններին:

Ու ճշմարիտ, ո՞վ է աւելի բարեկամ Էջմիածնի, մենք, որ աշխատում ենք, թէև գուցէ խիստ քննադատելով, զգուշացնել նրան գանագան Մանկունիների և Մամբրէների անսանձ կամայականութեան դէմ, բաց ենք անում Էջմիածնի աչքերը, ցոյց տալով նրան թէ քանի որ իշխանութիւնը կը լինի այդ տեսակ մարդկանց ձեռքում, ժողովուրդը հետզհետէ կը կորցնի իր առաջվայ յարգանքը դէպի մայրաթոռը, թէ նոյն Մանկունիներն ու Մամբրէները, որոնք իրանց գործերով խայտառակում, կառուցում են Էջմիածնի անունը, վայր են դցում նրա վարկը ժողովրդի աչքում:

Մենք համոզված ենք, որ մի ժամանակ կը գայ, երբ Էջմիածինը վերջապէս կը հասկանայ, որ նրա իսկական բարեկամները մենք ենք եղել միշտ, մենք որ երբէք չենք վախենում ուղղակի մայրաթոռի երեսին ճշմարտութիւնն ասելու, անխնայ քննադատել ենք մեր հոգևորականութեան կենտրոնի գործերը, իսկ Էջմիածնի և նոյն իսկ Վեհափառ Կաթողիկոսի ամենանանհաշտ, ամենամեծաստակար թշնամիները միշտ եղել են այն շողոքորթները, այն Մանկունիները և մայրաքաղաքների այն քուրմերը, որոնք իբր թէ մայր-աթոռի մասին հոգալով, հոգացել են միշտ միմիայն իրանց նիւթական շահերի մասին և իրանց խորհրդներով իսկապէս ամենամեծ վնաս հասցրին մեր հոգևորականութեան կենտրոնի հեղինակութեանը, իրանց գործունէութեամբ իրապէս հասան այն հետևանքին, որ ատելութիւն դցեցին հայոց հասարակութեան և Էջմիածնի մէջ:

Արդեօ՞ք Կաթողիկոսը հիանդ է, կամ շատ զբաղված է, այդ մենք չը գիտենք: Մենք տեսնում ենք միայն քանի մի ժամանակից, որ Էջմիածինը և ամբողջ հոգևոր իշխանութեան գործերը անմիջապէս Վեհափառի ձեռքով չեն կառավարվում, այլ կառավարվում են կամ փոքի մէջ ապրող մի որ և է բարդախնդրի ձեռքով, կամ ուրիշ տեղ ապրող մի որ և է եգուիտ, խարդախ, ազգուրաց, մատնիչ, դատաճան քուրմի գրաւոր խորհրդներով:

Ուրեմն դրանից պարզ պէտք է տեսնեն, որ մեր քննադատութիւնները երբէք չեն կարող վերաբերվել անմիջապէս Վեհափառին, այլ այն ողորմելիներին, որոնք նրան շրջապատելով կամ հեռուից նրան խորհրդներ տալով, մոլորեցնում են նրան և մասամբ հասել են արդէն իրանց նպատակին: Նրանք իրանց ջանքերով այնքան վայր են դցել Էջմիածնի անունը, այն ատելաճան կոտրել են նրա պատիւը, որ այդ հայոց ազգային դարևոր հիմնարկութիւնը ընդհանալով այժմ իր պատմական դարևոր կոչմանը հակառակ, կարծես թէ ջանում է ազգային հիմնարկութենից դառնալ մի տեսակ պապութիւն:

Կարդանք և կը տեսնենք: Մենք դեռ յոյս չենք կորցնում որ կը գայ մի ժամանակ, երբ մայր-աթոռի միաբանների բարեմիտ մասը, և նոյն ինքն Կաթողիկոսը վերջապէս կը համոզվեն, որ նրանց բարեկամները, Էջմիածնի հաւատարիմ զաւակները՝ մայր-աթոռը խստութեամբ քննադատողներն էին, իսկ Էջմիածնի, թէև ծածուկ, բայց ամենաուժեղ թշնամիները, Վեհափառին շրջապատող այդպէս անուանված մտերիմներն էին և այն օձասիրտ, եղուիտ, իրանց բարեկամ ձևացնող, ամեն երևոյթին շողոքորթող, ոչ թէ միայն անշարժութիւն, բայց և յետադիմութիւն քարոզող քուրմ խորհրդատուներն էին: Այո, կը գայ մի ժամանակ, երբ Էջմիածինը և ինքն Վեհափառը կը համոզվեն որ նրանց բարեկամները, նրանց անուան մասին հոգացողները՝ անխնայ քննադատողներն էին, իսկ նրանց ամենաուժեղները՝ Էջմիածնի անունը իրանց գործերով ու խրատներով վայր դցող, նրան բարեկամ ձևացողներ, մայր-աթոռի ազգային փոքերը տակն անողներն էին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Նոյեմբերի 20-ին

Եթէ մի հայազգ գցելու լինենք մեր ազգի ներկայ դրութեան վրա, մենք կը տեսնենք, որ հայ ազգը ապաղայում երջանիկ և կրթեալ լինելու համար դեռ շատ բաների կարօտ է, որոնք ձեռք բերելու համար մեծ ճշտասանք և մանաւանդ նիւթական միջոցներ անհրաժեշտ է ունենալ: Սակայն ուրիշ պէտք է սպասել նիւթական միջոց: Ընդհանրապէս հայ հասարակութիւնը կարելի է չորս դասակարգի բաժանել. հոգեւորականներ, մտաւորականներ, վաճառականներ և արհեստաւորներ (մի կողմ թողնենք երկրագործներին, որոնք իրանք կարօտութեան մէջ են):

Հայ հոգեւորականներից նիւթական միջոց անկարելի է սպասել. թերբաց Հայաստանի օրհասական բոլորում, երբ այդպիսիների պարտքն էր առաջին անգամ հրաւէր կարդալ, երբ Հայաստանի հաւաքաներին արձագանք էր տալիս հեռաւոր Աղվանք, երբ յեսին մեկը չը ինայեց իր կոպէկը իր սովամահջ եղբայրներին օգնելու համար, այդ միջոցին հայ հոգեւորականութիւնը, չէնց նոյն իսկ Էջմիածինը պահում էր մի ուռնտիրիր լռութիւն. ոչ մի աբեղայի անուն չը լսվեցաւ նուիրատուաց ցուցակների մէջ—Երեւայ այդ, 17,000 բուբլ... մայր աթոռում նուիրատուութեան վրայ բայց արդեօք ինչ էր այդ 17,000 դրբլի, եթէ ոչ ազգից տացած կոպէկ-